Մրցույթ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ 2022թ. գործունեության գնահատման Աուդիտորական կազմակերպության ընտրության

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ հայտարարում է անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության մրցույթ:

1. Մրցույթի կազմակերպման վայրը /հասցեն/՝	ք. Երևան, 0002, Ամիրյան փ. 23/1
2. Մրցույթի հայտերը ընդունման ժամկետները	Մրցույթի հայտերը ընդունվում են 04/04/2022թ.-ից 29.04.2022թ.-ը ներառյալ յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-16:00:
3.Մրցույթի մասնակցելու անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը	Մրցույթի մասնակցելու փաստաթղթերի ցանկը սահմանվում է բանկի կարգով, որը տրամադրվում է հրապարակային ծանուցման օրվանը հաջորդող օրվանից:
4.Մրցույթում հաղթողի որոշելու կարգը	Աուդիտորական կազմակերպություններից ընտրությունը կատարվում է մրցութային հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով ֆինանսական և/կամ տեխնիկական հայտերի առանձին կետերի առավել բարենպաստ առաջարկները (աուդիտի իրականացման, ներառյալ աուդիտորական եզրակացության և/կամ հաշվետվության ներկայացման, ժամկետներ, աուդիտի իրականացման արժեք և այլն)՝ նախապատվությունը տալով նախորդ երեք տարիներին անընդմեջ Բանկի աուդիտը իրականացրած կազմակերպութունից տարբեր՝ այլ կազմակերպությանը (առկայության դեպքում):
5.Մրցույթում հայտերը բացելու և ամփոփելու նիստի օրը և ժամը	Մրցույթի հայտերը կբացվեն Հանձնաժողովի նիստում ս.թ. մայիսի 03-ին՝ ժամը 15:00, և կամփոփվեն ս.թ. մայիսի 04-ին՝ ժամը 15:00-ին:
6.Մրցույթի կարգին ծանոթանալու վայրը և դրա պատճենը տրամադրելու կարգը	Մրցույթի կարգը տրամադրվում է հրապարակային ծանուցման օրվանը հաջորդող օրվանից հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Ամիրյան փ. 23/1, (Տեղեկատուի աշխատակցից)՝ գանձելով պատճենահանման ծախսերը: